**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2**
**№ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/4-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 25 .03.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Ավանգարդ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Խալաթյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 18.12.2018թ. կնքված № ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/4-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայնանագրի № 1 Հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **71924263,2** (յոթանասունմեկ միլիոն ինն հարյուր քսանչորս հազար երկու հարյուր վաթսուներեք ամբողջ երկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ.:

**3. Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Ավանգարդ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ԱՀ, ք. Մարտունի, Լ. Պետրոսյան 31 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Հայբիզնեսբանկ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 1150014471070100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 90213015 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ | տնօրեն |
| Ն. ՅՈԼՅԱՆ | Ա. ԽԱԼԱԹՅԱՆ |

**Հավելված N 1**
**№ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/4-1 N 2 համաձայնագրի**

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | Չ/մ | Քանակը | Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/ | Ապրանքների մատակարարումը 2020թ.-ին ըստ ամիսների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս |
| 1 | Հալած պանիր /Պանիր հալեցրած/ | կգ | 40038 | 1796.4 | 71924263,2 | 8000 | 8000 | 8000 | 8000 | 5538 | 2500 |

**Ծանոթություն՝** մատակարարումը ք.Երևան, Սարմի 103 հասցեում:Մատակարարման գործընթացը իրականացվելու է համաձայն պատվիրատուի կողմից տրված հայտի հիման վրա:

**Հավելված N 2**
**№ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/4-1 N 2 համաձայնագրի**

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Գնման առարկան | CPV-ի կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ* | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | Հալած պանիր /Պանիր հալեցրած/ | 15542290/1 | 14371200 | 28742400 | 43113600 | 57484800 | 67433263 | 71924263,2 | 71924263,2 | 71924263,2 | 71924263,2 | 71924263,2 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Ավանգարդ» ՍՊԸ տնօրեն

Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ